Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
«____» _____ 2015թ.
Պետական գրանցման համարը _____
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարար
_____ Ա. Դանիելյան

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«17» փետրվարի 2015թ. N 24-Ն

ք. Ստեփանակերտ

ՀԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱԽԱՌՆ ԵԿԱՄՏԻՑ ՆՎԱԶԵՑՎՈՂ ՀԱՎԻ, ԲԱՂԻ, ՍԱԳԻ, ՀՆԴԿԱՀԱՎԻ, ԽԱՅՏԱՀԱՎԻ ԵՎ ԼՈՐԻ ՃՏԵՐԻ ՊԱՀՎԱԾՔԻ ՓԱՍՏԱՑԻ ԿՈՐՍՏԻ (ԲՆԱԿԱՆ ԿՈՐՍՏԻ) ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 26-ի N 245 որոշումը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվող հավի, բաղի, սագի, հնդկահավի, խայտահավի և լորի ճտերի պահվածքի փաստացի կորստի (բնական կորստի) չափերը՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ա. Գալստյանին՝

1) սույն հրամանի 1-ին կետով սահմանված չափերը եռօրյա ժամկետում ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն՝ համաձայնեցման.

2) սույն հրամանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Համաձայնեցված է՝
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կառավարությանն առընթեր
հարկային պետական ծառայության պետ
_____ Ա.ԲԱԼԱՅԱՆ
_____ _____ 2015թ.

Հավելված
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
գյուղատնտեսության նախարարի
2015 թվականի փետրվարի 17-ի
N 24-Ն հրամանի

Չ Ա Փ Ե Ր

ՀԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱԽԱՌՆ ԵԿԱՄՏԻՑ ՆՎԱՋԵՑՎՈՂ ՀԱՎԻ, ԲԱԴԻ, ՍԱԳԻ, ՀՆԴԿԱՀԱՎԻ, ԽԱՅՏԱՀԱՎԻ ԵՎ ԼՈՐԻ ՃՏԵՐԻ ՊԱՀՎԱԾՔԻ ՓԱՍՏԱՑԻ ԿՈՐՍՏԻ (ԲՆԱԿԱՆ ԿՈՐՍՏԻ)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն նորմատիվ իրավական ակտը սահմանում է հավի, բադի, սագի, հնդկահավի, խայտահավի և լորի ճտերի պահվածքի ընթացքում առաջացող բնական կորուստների թույլատրելի սահմանային չափերը:
2. Ճտերի պահվածքի ընթացքում առաջացող բնական կորուստները հետևանք են գենետիկական բացասական հատկանիշների, անոմալիաների և այլ չկառավարվող սթրես գործոնների:
3. Բնական կորուստներին չեն դասվում հավի, բադի, սագի, հնդկահավի, խայտահավի և լորի ճտերի պահվածքի ընթացքում ստանդարտների, տեխնիկական պայմանների, տեխնիկական շահագործման և պահպանման կանոնների, ինչպես նաև տեխնոլոգիական պահանջների խախտման հետևանքով առաջացած կորուստները:

II. ՀԱՎԻ, ԲԱԴԻ, ՍԱԳԻ, ՀՆԴԿԱՀԱՎԻ, ԽԱՅՏԱՀԱՎԻ ԵՎ ԼՈՐԻ ՃՏԵՐԻ ՊԱՀՎԱԾՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԱՌԱՋԱՑՈՂ ՓԱՍՏԱՑԻ ԿՈՐՍՏԻ (ԲՆԱԿԱՆ ԿՈՐՍՏԻ) ՉԱՓԵՐԸ (ՏՈԿՈՍՆԵՐՈՎ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ)

4. Ճտերի պահվածքի փաստացի կորստի (բնական կորստի) չափերը կազմում են՝
   1) հավի ճտերի պահվածք՝ 3 տոկոս.
   2) բադի ճտերի պահվածք՝ 4 տոկոս.
   3) սագի ճտերի պահվածք՝ 4 տոկոս.
   4) հնդկահավի ճտերի պահվածք՝ 6 տոկոս.
   5) խայտահավի ճտերի պահվածք՝ 6 տոկոս.
   6) լորի ճտերի պահվածք՝ 6 տոկոս:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ